ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔ

գ. Փարաքար **11/12/2024**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 17
ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 21 անդամներ:

Ավագանու նիստին մասնակցում էին՝

Լիաննա Հարությունյանը, Գոռ Հովհաննիսյանը, Արման Խաչատրյանը, Արամ Խաչատրյանը, Հ1 լրատվական կայքի լրագրող Հայկուշ Ասլանյանը և օպերատոր Հայկ Պետրոսյանը:

Նիստը վարում էր տարիքով ավագ ավագանու անդամ՝ Էմմա Թորոսյանը,

Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Գայանե Մանուկյանը:

Լսեցին
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 11-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԷՄՄԱ ԹՈՐՈՍՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 64-րդ հոդվածի 3-րդ մասով և 65-րդ հոդվածով.

Փարաքար համայնքի ավագանին որոշում է՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 11-ի արտահերթ նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ-21 **Դեմ-0** **Ձեռնպահ-0**

Էմմա Թորոսյանն առաջարկեց խմբակցություններին ներկայացնել իրենց թեկնածուներին:

«Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության ղեկավար Արաքսյա Վարդանյանը նշեց, որ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցությունը համայնքի ղեկավարի թեկնածու չի առաջադրում:

«Դավիթ Մինասյան» դաշինք խմբակցության ղեկավար Դավիթ Մինասյանը նշեց, որ «Դավիթ Մինասյան» դաշինք խմբակցությունը նույնպես համայնքի ղեկավարի թեկնածու չի առաջադրում:

«Ապրելու երկիր» խմբակցության ղեկավար Վալոդյա Գրիգորյանը «Ապրելու երկիր» խմբակցության անունից հայտնեց, որ նույնպես համայնքի ղեկավարի թեկնածու չի առաջադրում:

Նիստը վարողը հայտարարեց, որ օրակարգային հարցով համայնքի ղեկավարի թեկնածու չեն առաջադրվել խմբակցությունների կողմից և նիստը հայտարարեց փակված:

Ավագանու անդամներ

ՕՆԻԿ ԱԽՎԵՐԴՅԱՆ

ԴԱՎԻԹ ԱԽՏՈՅԱՆ

ՌՈՒԲԻԿ ԱՂԵԿՅԱՆ

ԼԻԱՆԱ ԳԱՍՊԱՐՅԱՆ

ԼՅՈՒԴՎԻԳ ԳՅՈՒԼՆԱԶԱՐՅԱՆ

ՎԱԼՈԴՅԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՆԵԼԼԻ ԵՍԱՅԱՆ

ԷՄԻՆ ԵՐԻՑՅԱՆ

ՌՈՒԴԻԿ ՋԵՅՆԱԼՅԱՆ

ԷՄՄԱ ԹՈՐՈՍՅԱՆ

ՄԱՐԻԱՄ ԻՍՊԻՐՅԱՆ

ՄԱՆՈՒԿ ՂԱԶԱՐՅԱՆ

ՏԻԳՐԱՆՈՒՀԻ ՂԱԶԱՐՅԱՆ

ԴԱՎԻԹ ՄԻՆԱՍՅԱՆ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԽԻԹԱՐՅԱՆ

ԿԱՐԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՊՈՂՈՍՅԱՆ

ՀԱՅԿԱԶ ՍԱՐԳՍՅԱՆ

ՆԵԿՏԱՐ ՍԱՐԴԱՐՅԱՆ

ԱՐԱՔՍՅԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԱՎԵՏԻՍ ՖԱՐՖԱՐՅԱՆ

Ավագանի

ԷՄՄԱ ԹՈՐՈՍՅԱՆ

Նիստն արձանագրեց՝ Գայանե Մանուկյանը